Խ. Ս. Հ. Մ.-Ի ՄԱՐՏՆՉՈՂ ԱՆԱՍՏՎԱԾՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

# ՄԱՄԻ
## ՇՐՋԱՆԱՅԻՆ ՅԵՎ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հրատարակություն ՀԽՍՀ ՄԱՄԻ կենտխորհրդի

ՅԵՐԵՎԱՆ 1938 թ.

Թարգմանությունը խմբագրեց՝ Ա. ՈԳԱՆԵԶՈՎ
Թարգմանիչ՝ Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«Խորհրդային Հայաստան»-ի Հրատարակչության տպարան
ՅԵՐԵՎԱՆ 1938 թ.

Գլավլիտի լիազոր № Ա.— 4053: Տիրաժ 2000: Պատվեր № 597

3 1 JAN 2018

# I ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹԸ

1. Մարտնչող անաստվածների Միության ղեկավար օրգանը շրջանի (քաղաքի) սահմաններում հանդիսանում է ՄԱՄ-ի շրջանային (քաղաքային) կոնֆերանցիան, վոր հրավիրվում է տարեկան առնվազն 1 անգամ:

2. Կոնֆերենցիայում գաղտնի քվեարկությամբ ընտրվում է ՄԱՄ-ի շրջանային (քաղաքային) խորհուրդը, վորը կոնֆերենցիաների միջև ընկած ժամանակամիջոցում շրջանում (քաղաքում) հանդիսանում է բարձրագույն ղեկավար մարմինը: Խորհրդի անդամների թիվը վորոշվում է շրջանային (քաղաքային) կոնֆերենցիայի կողմից՝ 12–17 մարդ: Ընտրվում է նաև վերստուգիչ հանձնաժողով 3–5 հոգուց: Շրջխորհրդի պլենումը գումարվում է առնվազն յեռամսյակում 1 անգամ:

Ծանոթություն.— ՄԱՄ-ի շրջկազմբյուրոն իր աշխատանքների ընթացքում ղեկավարվում է սույն կանոնադրությունով և շրջկոնֆերենցիա հրավիրելու նախապատրաստական աշխատանք է կատարում:

Շրջկոնֆերենցիա կարող է հրավիրվել այն դեպքում, յերբ առնվազն կա 15 գործող բջիջ:

Կազմբյուրոն շրջկոնֆերանցիա պետք է հրավիրի իր կազմակերպումից առնվազն 3 ամիս հետո:

3. Ընթացիկ աշխատանքի համար ընտրվում է նախագահություն՝ կազմված նախագահից, պատասխանատու քարտուղարից և 3 անդամից: Նախագահը և պատասխանատու քարտուղարն ընտրվում են շրջանային (քաղաքային) խորհրդի պլենումում:

4. Այն քաղաքներում, վորոնք մարզային կենտրոն են կամ ինքնուրույն վարչական միավոր են, ստեղծվում են ՄԱՄ-ի քաղաքային խորհուրդներ:

5. Շրջաններ ունեցող քաղաքներում շրջխորհուրդներ ստեղծ-

վում են միայն մարզխորհրդի և կենտխորհրդի վորոշմամբ:

Քաղաքների քաղաքային և շրջանային խորհուրդներն աշխատում են սույն կանոնադրության հիման վրա:

6. ՄԱՄ-ի շրջանային (քաղաքային) խորհուրդն իր գործունեության մասին հաշիվ է տալիս շրջկոնֆերենցիայի առաջ և ՄԱՄ-ի մարզային (յերկրամասային, հանրապետական) խորհրդի առաջ:

7. ՄԱՄ-ի Շրջանային (քաղաքային) խորհուրդն աշխատում է շրջանային (քաղաքային) կուսակցական կազմակերպության ղեկավարությամբ և ամենասերտ, գործնական կապ է հաստատում կոմյերիտմիության, պրոֆմիությունների, անտեսական կուլտուրական և ուրիշ հասարակական կազմակերպությունների հետ:

ՄԱՄ-ի շրջխորհուրդներն ամենասերտ կապ է հաստատում ՄՏԿ_ների և խորհտնտեսությունների հետ, վորպեսզի միասնաբար ծավալեն հակակրոնական աշխատանքը:

8. ՄԱՄ-ի շրջխորհրդի աշխատանքի բազա յե հանդիսանում շրջանային ակումբը, կուլտուրայի տունը, վորտեղ ՄԱՄ-ի շրջխորհուրդը շրջանային մասշտաբով մասսայական միջոցառումներ է ձեռնարկում:

ՄԱՄ-ի շրջխորհուրդը կապ է պահպանում նաև կուսկաբինետի, դպրոցների, գրադարանների, ռադիո հանգույցի, կինոթատրոնի հետ, այդ հիմնարկությունների միջոցով հակակրոնական աշխատանք է ծավալում:

## II ՄԱՄ-Ի ՇՐՋԱՆԱՅԻՆ (ՔԱՂԱՔԱՅԻՆ) ԽՈՐՀՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

9. Շրջանային (քաղաքային) խորհրդի հիմնական խնդիրներն են:

ՄԱՄ-ի բջիջներ կազմակերպելը, նրանց աշխատանքը ղեկավարելը և նրանց կոնկրետ ոգնություն ցույց տալը:

Մասսայական լայն հակակրոնական պրոպագանդա ծավալելը, հակակրոնական կադրեր պատրաստելը՝ խմբակները, սեմինարներ, կուրսեր կազմակերպելու միջոցով, ՄԱՄ_ի աշխատանքների մեջ քաշելով ինտելիգենցիային:

10. Այս խնդիրների կատարման համար ՄԱՄ_ի շրջանային (քաղաքային) խորհուրդը՝



ԱԶԳԱՅԻՆ
1-37769գր

ա) շրջանի-քաղաքի աշխատավոր լայն մասսաների մեջ կազմակերպում է սիստեմատիկ հակակրոնական պրոպագանդա (դեկլուցումներ դասախոսություններ, զրույցներ, հակակրոնական գրականության ընթերցում և այլն), հաշվի առնելով ազգային ու կրոնական առանձնահատկությունները,

բ) յերևան է հանում ու հաշվի առնում ակտիվը և ՄԱՄ-ի բոլոր անդամներին աշխատանքի մեջ է ներգրավում:

գ) ՄԱՄ_ի բջիջներին և շրջանի (քաղաքի) ձեռնարկություններին սիստեմատիկաբար սպասարկելու համար կազմակերպում է դասախոսական բյուրո:

դ) ՄԱՄ-ի բջիջներին մատակարարում է անդամատոմսեր, մարկաներ, հաշվառման քարտեր և ուրիշ կազմակերպչական նյութեր:

ե) ՄԱՄ_ի մարզային (յերկրամասային) խորհրդի պլանի և տեղական առանձնահատկությունների հաշվառման հիման վրա աշխատանքի պլան է կազմում շրջանի (քաղաքի) համար:

Ծանոթություն.— աշխատանքի պլան կազմելիս անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել այն վայրերի վրա, վորտեղ խորհուրդների ընտրությունների կապակցությամբ կրոնական կազմակերպություններն ակտիվություն են ցուցաբերում, ինչպես և այն կետերի վրա, վորտեղ կրոնական նախապաշարումներն ավելի ուժեղ են արգելակում անտեսական միջոցառումների կատարմանը:

զ) Կազմակերպում է կրոնական կազմակերպությունների գործունեության ուսումնասիրություն՝ այդ աշխատանքի մեջ ներգրավելով շրջանի դավառագիտական և այլ կազմակերպություններին,

է) աջակցում է շրջանում հակակրոնական գրականության տարածմանը, կազմակերպում է «Անտիրելիգոզնիկ» «Բեզբոժնիկ» ժուռնալների և հակակրոնական թերթերի բաժանորդագրություն,

ը) միջոցներ է գտնում հակակրոնական աշխատանք կատարելու համար,

թ) հաշվի յե առնում շրջանում (քաղաքում) կատարվող հակակրոնական աշխատանքը, կանոնավոր կապ է պահպանում ՄԱՄ-ի մարզային (յերկրամասային) Հանրապետական խորհրդի հետ և նրան ինֆորմացիա յե տալիս իր աշխատանքի մասին:

# III ՄԱՄ-Ի ՇՐՋԱՆԱՅԻՆ՝ (ՔԱՂԱՔԱՅԻՆ) ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

11. ՄԱՄ-ի շրջխորհրդի պլենումը հրավիրվում է առնվազն տարեկան 4 անգամ: Բացի այդ, վերստուգիչ հանձնաժողովի պահանջով, կամ խորհրդի անդամների առնվազն մեկ յերրորդ մասի պահանջով պլենումը կարող է հրավիրել արտակարգ նիստ:

12. Պարբերաբար կարող են հրավիրվել ընդլայնված պլենումներ՝ բջիջների ակտիվի և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ, կամ ակտիվի խորհրդակցություններ՝ աշխատանքի առանձին հարցերի մասին (աշխատանքը կոլտնտեսություններում, արդյունաբերական ձեռնարկություններում, յերկաթուղային տրանսպորտում, դպրոցներում, հակակրոնական և ուրիշ կամպանիաների անցկացում, ուսուցման նախապատրաստություն և այլն):

13. Պլենումի գործունեության շրջանակի մեջ են մտնում հետևյալ հարցերը.

ա) ՄԱՄ-ի կենտխորհրդի և մարզային (յերկրամասային, հանրապետական) խորհուրդների՝ հակակրոնական պրոպագանդայի խնդիրների մասին ընդունած կարևորագույն վորոշումների քննարկումը և դրանց իրականացման միջոցառումների մշակումը.

բ) Նախագահության շրջկոնֆերենցիային տալիք զեկուցման թեզիսների քննարկումն ու հաստատումը.

գ) ՄԱՄ-ի շրջխորհրդի աշխատանքի պլանների քննարկումը և նրանց կատարման ստուգումը.

դ) զանազան հասարակական կազմակերպությունների ինչպես և ՄԱՄ-ի առանձին բջիջների զեկուցումներ լսելը՝ իրենց հակակրոնական աշխատանքի մասին.

ե) ՄԱՄ-ի մարզային (յերկրամասային, հանրապետական) խորհրդի զեկուցման քննարկումը.

զ) ՄԱՄ-ի շրջխորհրդի յելքի և մուտքի սմետայի հաստատումը.

է) շրջկոնֆերենցիա հրավիրելու հարցի հաստատումը.

ը) ՄԱՄ-ի շրջանային (քաղաքային) խորհրդի միջև կնքված սոցմրցման պայմանագրերի քննարկումը և հաստատումը.



թ) ամեն մի յեռամսյակում ՄԱՄ-ի շրջխորհրդի նախագահության հաշվետվությունը լսելը:

Պլենումի աշխատանքը ղեկավարում է ՄԱՄ-ի շրջխորհրդի նախագահը:

14. Խորհրդի պլենումը կայացած է համարվում, յերբ ներկա յեն պլենումի անդամների յերկու յերրորդը:

15. Նախագահության գործունեության շրջանակի մեջ են մտնում.

ա) ՄԱՄ-ի ամբողջ ընթացիկ կազմ-մասսայական աշխատանքի ղեկավարությունը շրջանում (քաղաքում),

բ) ՄԱՄ-ի բջիջների հաստատումը, յերբ ստանում է կազմժողովի արձանագրությունը և անդամատոմսերի հանձնումը՝ համաձայն ներկայացված հաշվառման քարտերի քանակի,

գ) ՄԱՄ-ի բջիջների աշխատանքի պլանի քննարկումն ու հաստատումը.

դ) խորհրդի անդամների, արտաշտատային հրահանգիչների և ՄԱՄ-ի բջիջների հաշվետվությունները լսելը՝ իրենց աշխատանքի մասին:

16. Նախագահն ընդհանուր ղեկավարություն է ունենում խորհրդի աշխատանքին, հետևում է աշխատանքների պլանի կատարմանը, ղեկավարում է նախագահության աշխատանքը, կապ է պահպանում կուսակցական, կոմյերիտական, պրոֆեսիոնալ և այլ կազմակերպությունների հետ, այդ կազմակերպություններում հարց է դնում շրջանում (քաղաքում) տարվելիք հակակրոնական աշխատանքի մասին, ղեկավարում է կադրերի նախապատրաստման գործը և առանձին հանձնարարություններ է տալիս խորհրդի անդամներին ու արտաշտատային հրահանգիչներին:

17. Պատասխանատու քարտուղարը փոխարինում է նախագահին, աշխատանքի զանազան միջոցառումներ է մշակում: ՄԱՄ-ի շրջխորհուրդը ՄԱՄ-ի (մարզային յերկրամասային) Հանրապետական Խորհրդի ցուցումների հիման վրա աշխատանքի պլանի նախագիծ է կազմում և ներկայացնում նախագահությանը՝ ի հաստատություն, նախագահի հետ միասին դասախոսների կադրեր է ընտրում, ստուգում է նրանց և կազմակերպում է զեկուցումների թեզիսների կամ կոնսպեկտների հաստատումը, հարցեր է նախապատրաստում

հերթական նիստի կամ ակտիվի ժողովի համար, ՄԱՄ-ի բջիջների աշխատանքի հետազոտման պլան է կազմում և ակտիվի միջոցով հետազոտություն է կազմակերպում, սոցպայմանագրերի նախագիծ է մշակում շրջանային (քաղաքային) խորհրդի և ՄԱՄ-ի բջիջների համար և այլն:

18. Գանձապահը կազմակերպության անդամների հաշվառում է կատարում, անդամավճարներ է բաց թողնում, ամբողջ ֆինանսական հաշվետվությունն է վարում, պահում է անդամատոմսերը, մարկաները հաշվառման քարտերը և այլ կազմակերպչական նյութերը:

Ծանոթություն.— *Տոմսերը և կազմակերպչական մյուս նյութերը պետք է պահպանվեն շրջանային (քաղաքային) խորհուրդներում, որպես հաշվետվության խստորեն յենթակա փաստաթղթեր:*

Գանձապահը վեցորյակում առնվազն 3 անգամ պետք է աշխատի խորհրդի աշխատանքի ժամերին:

19. Նախագահության հաստատած պլանի պարտականությունների բաշխման հիման վրա շրջանային (քաղաքային) խորհրդի յուրաքանչյուր անդամ կոնկրետ աշխատանք է տանում, կապակցելով այն համապատասխան կուսակցական ու կոմյերիտական, ինչպես և պրոֆեսիոնալ ու այլ հասարակական կազմակերպությունների հետ (աշխատանքը յերիտասարդության մեջ, կանանց մեջ, հակակրոնական ակտիվի մեջ, դպրոցներում և այլն): ՄԱՄ-ի ակտիվը նախագահության անդամներին օգնելու համար բաշխված է նախագահության կողմից, ըստ վերջինիս հայեցողության:

20. Արտաշտատային հրահանգիչները կոմպլեկտավորվում են ակտիվի միջից և աշխատում են ՄԱՄ-ի շրջանային (քաղաքային) խորհրդի նախագահի ցուցումների համաձայն:

21. Հակակրոնական աշխատանքը դպրոցներում՝ յերեխաների և ծնողների մեջ առանձնացված է որպես ՄԱՄ-ի շրջանային (քաղաքային) խորհրդի աշխատանքի հատուկ բնագավառ և կատարվում է կենտրոնական խորհրդի հատուկ հրահանգի համաձայն:

22. Բացի ՄԱՄ-ի բջիջների աշխատանքի կազմակերպումից՝ շրջանային (քաղաքային) խորհուրդը կազմակերպում է զանազան միջոցառումների անցկացումը շրջանային (քաղաքային) մասշտաբով—հակակարոնական դասախոսության կազմակերպում շրջանային ակումբում, թատրոնում, դեկուցումների ու յերեկոների ցիկլ կազմակերպելը ակումբներում, կոլտնտեսություններում, կենտրոնական գրադարանում, անաստվածների յերեկույթներ կազմակերպելը, շարժական հակակրոնական ցուցահանդեսի աշխատանքը ձեռնարկություններում, կոլտնտեսություններում: Անց է կացնում գիտական հակակրոնական կոնֆերենցիաներ:



23. Շրջանային (քաղաքային) խորհուրդը հատուկ ուշադրություն պետք է դարձնի տատանվողների և հավատացյալների մեջ անհատական ագիտացիա մղելու գործի դրվածքի վրա: Այս կարևորագույն միջոցառումի իրականացումը ամբողջ խորհրդի գործն է: Բջիջների կողմից անհատական ագիտացիայի համար առանձնացված անձինք պետք է հաստատվեն շրջանային (քաղաքային) խորհրդի նախագահության կողմից:

24. Շրջանային (քաղաքային) խորհուրդն ուսումնասիրում է յեկեղեցականների աղանդավորների (սեկտանտների) գործունեությունը՝ նպատակ ունենալով մերկացնել նրանց, որի համար աշխատանքի մեջ է ներգրավում գավառագիտական և ուրիշ շրջանային կազմակերպություններ, ուսումնասիրում է այն ուղիներն ու ձևերը, որոնցով աշխատավորները հեռանում են կրոնից, ուսումնասիրում է այն պահանջները, որ առաջադրվում են հակակրոնական աշխատանքին (ուսումնասիրում է ընթերցողներին հետաքրքրող հարցերը, դասախոսությունների ժամանակ տրված հարցերը, և այլն):

25. Շրջանային (քաղաքային) խորհուրդն օգտագործում է զանազան կազմակերպությունների կողմից կազմակերպվող կադրերի պատրաստման ու վերապատրաստման կուրսերը, այդ կուրսերի ծրագրի մեջ մտցնելով հակակրոնական թեմատիկա: Այդ նույն նպատակով ՄԱՄ-ի շրջանային (քաղաքային խորհուրդը լծվում է մեծահասակների, կիսագրագետների դպրոցների աշխատանքին և այլն:

26. ՄԱՄ-ի շրջանային (քաղաքային) խորհուրդն իր աշխատանքի ամենօրյա հաշվառում է կատարում գրանցումներ անելով «Շրջխորհրդի աշխատանքի հաշվառման տետրակ»-ում ու հաշվետվության ուրիշ ձևերում և հետևում է, որ ՄԱՄ-ի բջիջները

և իրենց աշխատանքի հաշվառում կատարեն (տես բժիշկների աշխատանքի մասին տրված հրահանգը): Շրջանային (քաղաքային) խորհուրդը հետևում է նաև, որ բժիշկներից ժամանակին ստացվեն հաշվետվությունները և զանազան կամպանիաների արդյունքների նյութերը, բժիշկներից պահանջելով, որ իր ժամանակին ներկայացնեն դրանք:

27. ՄԱՄ-ի շրջանային (քաղաքային) խորհուրդն իր աշխատանքի համար պետք է ունենա առանձին շենք, որտեղ խորհրդի անդամներն ու ակտիվներն ամենօրյա հերթապահություն են անում: Շենքը պետք է կահավորված լինի հակակրոնական էքսպոնատներով:

## IV. ՄԱՄ-Ի ՇՐՋԱՆԱՅԻՆ (ՔԱՂԱՔԱՅԻՆ) ԽՈՐՀՐԴԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՅԵՎ ՇՏԱՏԻ ՄԱՍԻՆ

28. Միջոցները կազմվում են՝

ա) անդամավճարների 50%-ից,

բ) պայմանագրային մուտքերից,

գ) դասախոսական աշխատանքի վճարումներից,

դ) այլ մուտքերից (դոտացիա և այլն):

29. Դրամական գումարները պահվում են շրջանային (քաղաքային) խորհուրդների ընթացիկ հաշիվներում, պետական վարկային հիմնարկություններում:

30. ՄԱՄ-ի քաղաքային ու գյուղական շրջանային խորհուրդներում կարող են լինել վճարովի (ազատված) աշխատողներ (նախագահ կամ պատ. քարտուղարը և տեխնիկական աշխատող) համաձայնության գալով տեղական կազմակերպությունների հետ:

## V. ԿՆԻՔԻ ՅԵՎ ՇՏԱՄՊԻ ՄԱՍԻՆ

31. ՄԱՄ-ի շրջանային (քաղաքային) խորհուրդներն իրավական անձի իրավունք ունեն և օգտվում են ՄԱՄ-ի կենտրոնական խորհրդի սահմանած ձևի կնիքով ու շտամպով:



## VI. ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ

32. Վերստուգիչ հանձնաժողովն ընտրվում է ՄԱՄ-ի շրջանային կոնֆերենցիայի կողմից, կոնֆերենցիայի որոշված թվով (5-7 մարդ):

33. Վերստուգիչ հանձնաժողովի ընտրությունները կատարվում են ՄԱՄ-ի կոնֆերենցիայում՝ գաղտնի (փակ) քվեարկությամբ:

34. Վերստուգիչ հանձնաժողովը հաշվետու յե ՄԱՄ-ի շրջանային կոնֆերենցիային և ՄԱՄ-ի մարզային (յերկրամասային, հանրապետական) խորհրդին:

35. Վերստուգիչ հանձնաժողովը ստուգում է ՄԱՄ-ի շրջխորհրդի գործունեությունը, ստուգում է նրա ֆինանսական աշխատանքը և հաշվետվությունը՝ առնվազն յեռամսյակում մեկ անգամ: Վերստուգիչ հանձնաժողովն իր ստուգման ու հսկողության արձանագրությունները ներկայացնում է ՄԱՄ-ի շրջխորհրդին միաժամանակ արձանագրությունների պատճեններն ուղարկում է ՄԱՄ-ի մարզային (յերկրամասային, հանրապետական) խորհրդին և ԽՍՀՄ ՄԱՄ-ի կենտրոնական խորհրդին:

36. Վերստուգիչ հանձնաժողովն իր կազմից ընտրում է նախագահ, նրա տեղակալ և քարտուղար:

37. Վերստուգիչ հանձնաժողովի անդամները ՄԱՄ-ի շրջխորհրդի պլենումի և նախագահության աշխատանքին մասնակցում են խորհրդակցական ձայնի իրավունքով:

ԽՍՀՄ ՄԱՄ-Ի ԿԵՆՏ. ԽՈՐՀՈՒՐԴ

ՀՀ Ազգային գրադարան
NL0936755

3 — ДЕК 1938

556

1
3776

Գին 20 կ.

**Положение о районных и городских советах СВБ.**

На армянском языке